Ե. Եչի աւուր ժողովեն ի մի, և յորժամ տեսանեն զազգս իւրեանց գերի ի ձեռս այլասեռից, տան ի փողիցն այն եւ ազատեն, եւ թէ կարի չատ գայցէ գերի՝ բաժինս առնեն ի մէջ իւրեանց ըստ կարի, ոմանք մի և ոմանք Բ և ոմանք մինչ ի Ե առն և ծառայեցուցանեն, ոչ որպէս ծառայ՝ այլ իբրև զընտանիս իւրեանց, և զչկամեցողսն ապա և ուղարկեն յաշխարհն իւրեանց:

Զ. Զչի աւուր սակս Երուսաղէմի, որ կան յաղգաց իւրեանց անդ, աղքատացն և կարդացողացն և աղօթատեղաց նոցին՝ թէ զինչ եւս պիտանայցէ նոցա. այս ամենայն առաւօտուքն ժողովի: Եւ ապայ յամենայն երեկոյի Ուրբաթուն տուն առ տուն երթան և ժողովեն. այս վասն բանտարգելոց զի ազատեսցեն յաւուր պասեքի իւրեանց եւ տօնին:

Եւ օր մի ի տարին ժողովեն յամենայն թաղս իւրեանց, և ի տօնին՝ տղայոց որբոց և զպրաց զգեստս եւ հանդերձս բաշխեն: Տե՛ս զոր փոքր ազգ մի են նոքա, ո՞չ ապաքէն զայնքան արարք նոցա առնէ մերս մի եկեղեցի այսու ողորմութեամբ զոր ունին բարեընթաց[1]) ազգս մեր: Բայց անողորմք էին և աղքատատեացք վասն որոյ և ի կորուստ լինէր և եղև (–): Անծում էին յաւագ[2]) պահս. յառաւօտէ սկսէին զթութուն և զզահվէն(*), զայն և ի խուցս յեկեղեցոյն. և յաղօթս ընաւ ոչ գնային, այլ ի կիրակէսն որ ժողովուրդքն ելանէին յեկեղեցոյն, յերես ելանէին զի դեռ գային կամ ի գաւիթն մտանէր, և այն ոչ վասն Աստուծոյ, այլ զհաշիւս լուսգնոյն և հասկիցն առնել:

1) բարեընթաց. 2) յաւագ.

(*) Ածածինցիք և Սուրբ Գէորքցիք:

(–) «Եդին զնշանս իւրեանց ի նշանս եւ ինքեանք ոչ ծանեան»: